Հ ա ս տ ա տ ում եմ՝
«Մեհրաբյանի անվան
բժշկական ինստիտուտ» ՍՊԸ
տնօրեն՝ Է.Գ. Մեհրաբյան



«02» 02 20 18թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ «ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԸՆՏՐՈՎԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) թափուր կամ նոր ստեղծված ընտրովի պաշտոնների, այլ մարմինների կազմի ընտրության (այսուհետ՝ ընտրովի պաշտոններ) մրցույթին մասնակցելու պայմանները, հավակնորդների առաջադրման և ընտրության, ինչպես նաև մրցույթում հաղթող անձի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը:
1.2. Քոլեջի ընտրովի պաշտոնների ընտրությունը կատարվում է մրցույթով: Մրցույթը կազմակերպում է Քոլեջի մանկավարժական խորհուրդը (այսուհետ՝ մանկավարժական խորհուրդ)՝ խորհրդի նիստում, փակ գաղտնի քվեարկությամբ: Մրցույթում հաղթող անձը պաշտոնում ընտրվում է 5 տարի ժամկետով: Մրցույթում հաղթող անձինք պաշտոնի են նշանակվում՝ Քոլեջի տնօրենի հրամանով և նրանց հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով:

II. Քոլեջի ընտրովի պաշտոնները

2.1. Քոլեջում մրցույթով ընտրվում են՝

1) Ուսումնական մասի վարիչը:
2) Առարկայական ցիկլային հանձնաժողովի նախագահները:
3) Դասախոսները:
4) Մանկավարժական խորհրդի որոշմամբ այլ աշխատողները:

III. Մրցույթին մասնակցելու հիմնական պայմանները

3.1. Մրցույթն անցկացվում է «Կրթության մասին», «Միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին ու Քոլեջի կանոնադրությանը համապատասխան:
3.2. Հավակնորդի անձնական հատկանիշներին առաջադրվող պահանջներն են՝

գիտական աստիճան, գիտական կոչում, մասնագիտություն, աշխատանքային ստաժ և այլ պահանջներ, որոնք հրապարակվում են ընտրովի պաշտոնի մրցույթի անցկացման հայտարարությունում:

3.3. Մրցույթի անցկացման պայմանների մասին հայտարարությունը հրապարակվում է սոցիալական ցանցերում: Մրցույթին մասնակցելու փաստաթղթերը ներկայացնելու համար, որպես կանոն, սահմանվում է մեկ ամիս ժամկետ՝ մրցույթն անցկացնելու մասին հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից: Հայտարարության ձևը սահմանված է սույն կանոնակարգի թիվ 1 հավելվածում: Մրցույթի անցկացման ժամկետը (օրը) որոշում է Քոլեջի մանկավարժական խորհուրդը: Մրցույթի անցկացման օրը նշանակվում է լրացուցիչ հայտարարությամբ:

3.4. Հավակնորդները սույն կանոնակարգի 3.3 կետում նշված մեկամսյա ժամկետում Քոլեջի ընդհանուր բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

ա) դիմում Քոլեջի տնօրենին,

բ) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

դ) երկու լուսանկար 3x4 չափի,

ե) աշխատանքային գրքույկի պատճենը՝ վավերացված հիմնական աշխատանքի վայրում,

զ) համառոտ ինքնակենսագրություն,

է) գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող կամ ասպիրանտուրան ավարտելու մասին կամ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման մասին փաստաթղթերի պատճենները,

ը) տպագրված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների սահմանված կարգով հաստատված ցուցակը,

թ) բնութագիր հիմնական աշխատանքի վայրից:

3.5. Հավակնորդի դիմումը չի ընդունվում, եթե չի պահպանված դիմումի ներկայացման ժամկետը:

3.6. Ընդհանուր բաժինը գրանցում է հավակնորդներից ստացված փաստաթղթերը և զեկուցագրով ներկայացնում է Քոլեջի տնօրենին: Տնօրենն ուսումնասիրում է ստացված փաստաթղթերը և դրանք հանձնում մանկավարժական խորհրդին:

3.7. Հավակնորդների ներկայացրած փաստաթղթերը հայտարարության պահանջներին բավարարելու պայմաններում,

ա) Ուսումնական մասի վարիչի ընտրության դեպքում հավակնորդների փաստաթղթերը հանձնվում են մանկավարժական խորհրդին՝ մրցույթի անցկացման համար:

բ) Ցիկլային հանձնաժողովի նախագահի ընտրության դեպքում հավակնորդների փաստաթղթերը ներկայացվում են ուսումնական մասի վարիչին՝ նախնական քննարկում իրականացնելու համար: Որոշումը և փաստաթղթերը եռօրյա ժամկետում հանձնվում է մանկավարժական խորհրդի քարտուղարին:

գ/Դասախոսի ընտրության դեպքում հավակնորդների փաստաթղթերը հանձնվում են համապատասխան առարկայի ցիկլային հանձնաժողով՝ նախնական քննարկման: Որոշումը և փաստաթղթերը սահմանված եռօրյա ժամկետում հանձնվում են մանկավարժական խորհրդի քարտուղարին:

3.8. Հավակնորդների վերաբերյալ կարծիքները վավերացվում են Ուսումնական մասի վարիչի կողմից և 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում մանկավարժական խորհրդին՝ քննարկելու համար:

3.9. Եթե հավակնորդի տվյալները չի բավարարում մրցույթի հայտարարությունում նշված պայմաններին և պահանջներին, ապա հավակնորդի թեկնածությունը չի ներկայացվում մանկավարժական խորհրդի քննարկմանը և ուսումնական մասի վարիչի գրավոր եզրակացությամբ մերժվում է հավակնորդի առաջադրումը: Ընտրության օրվանից առնվազն 5 օր առաջ այդպիսի մերժում չստացած թեկնածուի մասնակցությունը մրցույթին համարվում է թույլատրված:

3.10. Հավակնորդի առաջադրումը մերժելու մասին եզրակացությունը կարող է բողոքարկվել Քոլեջի մանկավարժական խորհրդի նախագահին (Տնօրենին) մեկ օրվա ընթացքում: Մանկավարժական խորհրդի նախագահը ստացված բողոքը քննարկում և բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում է ընդունում ոչ ուշ, քան մրցույթի անցկացման օրվանից 3 օր առաջ:

3.11. Քոլեջի մանկավարժական խորհրդի քարտուղարը այբբենական կարգով կազմում է մրցույթի հավակնորդների վերջնական ցուցակը, որում նշվում են նաև գիտական աստիճանը և կոչումը, հայցվող պաշտոնը: Ցուցակը, մրցույթի օրվանից ոչ ուշ, քան 2 օր առաջ, հրապարակվում է Քոլեջում (փակցվում է հայտարարությունների տախտակին):

IV. Մրցույթով ընտրովի պաշտոնների հավակնորդները

4.1. Ընտրովի պաշտոնի հավակնորդն առաջադրվում է ցիկլային հանձնաժողովների ներկայացմամբ կամ ինքնաառաջադրմամբ:

4.2. Ընտրովի պաշտոններին կարող են հավակնել այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն սույն կանոնակարգով սահմանված նախընտրած պաշտոնին համապատասխան հատկանիշներ:

4.3. Ընտրովի պաշտոնում չի կարող ընտրվել՝

1) այն անձը, ով դատապարտվել է հանցագործություն կատարելու համար և նրա դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

2) այն անձը, որին օրենքով արգելված է զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ:

4.4. Քոլեջի ընտրովի պաշտոններին կարող են հավակնել.

ա) Քոլեջի ուսումնական մասի վարիչի պաշտոնում՝ պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում, գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք:
բ) Ուսումնական մասի վարիչն ընտրվում է փակ (ներքոլեջային) մրցույթի հիման վրա: Ուսումնական մասի վարիչի թեկնածությունը քննարկում և մանկավարժական խորհրդի ընտրությանն է ներկայացնում Քոլեջի տնօրենը:
գ) Առարկայական ցիկլային հանձնաժողովի նախագահն ընտրվում է բաց մրցույթի հիման վրա:
դ) Դասախոսի պաշտոնում՝ պրոֆեսորի կամ դոցենտի (ավագ գիտաշխատողի) գիտական կոչում կամ գիտական աստիճան ունեցող կամ ասպիրանտուրան ավարտած կամ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք:

V. Մրցույթի անցկացման ընթացակարգը և քվեարկության կարգը

5.1.Ընտրովի պաշտոնների մրցույթն իրականացվում և քվեարկությունը կատարվում է մանկավարժական խորհրդի նիստում: Թեկնածուն ընտրվում է մանկավարժական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Մրցույթն իրականացվում է մրցույթի անցկացման մասին լրացուցիչ հրապարակված հայտարարությունում նշված օրը:
5.2. Թեկնածուն իրավունք ունի բողոքարկել ընտրության արդյունքները: Այդ դեպքում.
1) ընտրությունից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում թեկնածուն գրավոր հիմնավորված բողոքը ներկայացնում է բողոքարկող հանձնաժողովին, որը յոթօրյա ժամկետում տալիս է գրավոր եզրակացություն,
2) բողոքարկող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Քոլեջի հիմնադիրների խորհրդի նախագահը, մանկավարժական խորհրդի նախագահը(տնօրեն), քարտուղարը, ուսումնական մասի վարիչը, ուսխորհրդի նախագահը,
3) բողոքարկող հանձնաժողովը իրավասու է քննարկել բողոքը, եթե ներկա են հանձնաժողովի հինգ անդամներից առնվազն չորսը: 3-օրյա ժամկետում քվորում չապահովելու դեպքում հրավիրվում է մանկավարժական խորհրդի արտահերթ նիստ տվյալ բողոքի քննարկման նպատակով ժամանակավոր բողոքարկող հանձնաժողով ստեղծելու օրակարգով:

VI. Մրցույթի հաղթողին պաշտոնի նշանակելը

6.1.Մրցույթի հաղթող ճանաչելու մասին մանկավարժական խորհրդի որոշումն ստանալուց հետո Տնօրենը, քննարկելով մրցույթի արդյունքները, իրավասու է.

1) Մրցույթի հաղթողի հետ կնքել աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով.
2) Գրավոր պատճառաբանված որոշմամբ, մերժել մրցույթի հաղթողին պաշտոնի նշանակելը և Քոլեջի մանկավարժական խորհրդի քարտուղարին վերադարձնել ստացված փաստաթղթերը:
3) Մրցույթի անցկացման գործընթացում խախտումներ բացահայտելու դեպքում առաջարկել մանկավարժական խորհրդին անվավեր ճանաչել ընտրության արդյունքները:
6.2. Ընտրության վերջնական արդյունքում թափուր տեղեր առաջանալու դեպքում Տնօրենը իրավասու է մինչև 1 տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքել տվյալ ճյուղի փորձառու մասնագետի հետ (առանց տարիքային սահմանափակման) մինչև տվյալ պաշտոնի ընտրության համար հերթական մրցույթում հաղթողի ընտրությունը:
6.3. Մրցույթում հաղթող ճանաչված անձը պաշտոնի է նշանակվում Քոլեջի տնօրենի հրամանով և նրա հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով:
6.4.Ընտրովի պաշտոնում նշանակված աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և Քոլեջի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է Քոլեջի համար կատարել իր պաշտոնին համապատասխան աշխատանք՝ պահպանելով Քոլեջում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ Քոլեջը պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշվող աշխատանքը և ապահովել ՀՀ օրենսդրությամբ, Քոլեջի կանոնադրությամբ և կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:
6.5.Աշխատանքային պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին:
6.6.Աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր, երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:
6.7.Աշխատանքի անցնելուց առաջ Քոլեջի լիազորված անձը աշխատանքային պայմանագրին համապատասխան աշխատողին ծանոթացնում է աշխատանքի պայմաններին, ներքին կարգապահության կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող Քոլեջի այլ իրավական ակտերին:
6.8.Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի:
6.9.Աշխատանքային պայմանագրում նշվում են՝
1) մրցույթում հաղթող աշխատողի մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը.
2) աշխատանքային պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
3) աշխատողի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը.
4) ուսումնական հաստատության և տնօրենի անունը և ազգանունը.

5) կառուցվածքային ստորաբաժանումը.
6) աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը.
7) պաշտոնի անվանումը.
8) աշխատանքային գործառույթները.
9) աշխատավարձի չափը և այն որոշելու ձևը.
10) սահմանված կարգով տրվող հավելումները, հավելավճարները և լրավճարները.
11) աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը.
12) աշխատաժամանակը և կողմերի իրավունքներն ու պարտավորությունները.
13) կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրում կարող են ներառվել նաև այլ պայմաններ:

VII. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Քոլեջի մանկավարժական խորհրդի որոշումը Քոլեջի տնօրենի կողմից հաստատելու հաջորդ օրվանից:
7.2. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ:
7.3. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Քոլեջի կանոնադրությամբ:

Հավելված 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ բժշկական քոլեջը հայտարարում է բաց մրցույթ քոլեջի _____պաշտոնի համար

«Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ» ՍՊԸ _____ պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության գործունակ այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

ա) _____,
բ) _____,
գ) _____,
դ) _____:

_____ պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում (քոլեջի տնօրենի անունով),
- երկու լուսանկար 3x4 չափսի,
- աշխատանքային գրքույկի պատճենը՝ վավերացված հիմնական աշխատանքի վայրում,
- ինքնակենսագրություն,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- գիտական աստիճանը և գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (եթե առկա են),
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),
- անձնագրի լուսապատճենը,
- բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- զինվորական գրքույկ կամ զինապարտության մասին փաստաթուղթ:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը՝ բնօրինակներով) ներկայացնել 201_թ. .....-ից մինչև 201_թ. .....-ը ժամը՝ 10-ից 17-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից),

Մեհրաբյանի անվան բշկական ինստիտուտ

Հասցեն՝ Հր. Քոչարի 21, հեռախոս՝ 26-27-43, 26-24-53: